



ՏՆՕՐԷՆ-ԽՄԲԱԳԻՐ Վ. ՓԱՓԱԶԵԱՆ

Թ. ՏԱՐԻ ԹԻԻ 17

ՀԱՄԱՐԱՐ

22 ԴԵԿՏԵՄԲԵՐ 1907

ԱՌԱՋՆԱԿԱՐԳ ԵՄԱՍԵՆՈՐԱՆ

ԶԵՆԻԹ

ՍԵՐԿԱՆՈՐԱՆ

ՄԻԱՎ ՆԵՐԿԱՑՆՑՈՒՑԻՉ

Գ. ՍԱՐԳԻՍՈՅ ԵՒ ԸՆԿ.


Պաշտոն-Գարու, Օռնդալ-Պաք հաստատութեան գէմ, Թիւ 16

(آ. آسادوریان) شرکت مطبعه — باب عالی جاده سنده نومو ۵۲

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Յ. ԱՍՏՏՈՒՐԵԱՆ

Կ. Պոլիս, Պաշտոն-Ալի հաստատութեան գէմ 52

Հատոր 40 փարսա



Ձեռքի, ոտի ու ոտի եւ ձեռքի
Վիանգաման մեքենաներ
կը գտնուին

Անկարելի է որ ընտանիք մը առանց կտրի մեքենայի մնայ, բայց էական կէտն է լաւ մեքենայ մը ունենալ, որովհետեւ լաւ մեքենայ մը անթիւ և անհամար ծառայութիւններ կը մատուցանէ, մինչդեռ գէշ տեսակէ մեքենայ մը անվերջ դժգոհութեանց եւ տաղտուկի աղբիւր մըն է:

Բոլոր աշխարհ գիտէ թէ՝

Ս Ի Ն Կ Է Ռ
ՀԱՅԹԱՏՈՒՅ ԿԱՅԾ. ՊԱԼԱՏԱՆ
THE SINGER
MANUFACTURING COMPANY



մեքենան լաւագոյն է. սոյն մեքենան ամենէն կաւարժ լազործուածը, հաստատունը եւ դիւրագործելին ըլլալուն բովանդակ աշխարհի

մէջ՝ ամէն մարդ Սինկերի մեքենան կը գնէ:

Սինկերի մեքենաները կը ծախոին մի միայն Սինկեր Ընկերութեան վաճառատանց մէջ:

ՄԱՍՆԱԿԱՆԱԳՈՐԾԱԿԱՆ
ՀԱՅԹԱՏՈՒՅ

- | | |
|---------|--|
| ԲԵՐԱ. | (1. Մեծ փողոց, Պօն Մարշէի դէմ, թիւ 343 եւ 343 կրկին . |
| | (2. Մեծ փողոց, Կալաթա Սէրայի Լիսէին դէմ. |
| ԿԱԼԱԹԱ | (1. Սինկեր խան, Թիւնէլի հետեւը. |
| | (2. Գարաքէօյ, Թրամվէյի կայարանին դէմ. |
| ՊՈԼԻՍ | (1. Սուլթան համալ . |
| | (2. Սուլթան Պէյազիտ, Թրամվէյի կայարանին դէմ, թիւ 13 . |
| ՍԿԻՒՏԱՐ | Զարչը Պօյու, թիւ 120 . |

Կասաբեալ երաւիաւորութիւն

Մասնաձիղեր գաւառներու բոլոր ֆաղափներու մէջ:

Սինկերի Ընկերութեան Կեդր. վարչատեղին կը գտնուի Բերա, Մեծ փողոց, թիւ 343 և 343 կրկին, Տիւզօղլուի տունը:



ՐԵԻԵԼՔ ՕՐԱ-

ԹԵՐԹ ազգային, գրական եւ ֆաղափական: — Բաժանորդագրութիւն՝ տարեկան Կ. Պոլսոյ համար 80 դրշ. վեցամսեայ 45 դրշ. գաւառներու համար տարեկան 108 դրշ. վեցամսեայ 60 դրշ. և օտար երկիրներու համար տարեկան 35 ֆր. վեցամսեայ 20 ֆր. Ձեռքէ վաճառում՝ քաւք փարա: ԱՐԵԻԵԼՔ հրա լարակ կ'ելլէ ամէն օր, կէս օրին, խընաւեալ բովանդակութեամբ, ընտիր յօդուածներով, թարմ լուրերով ու նորագոյն տեղեկութիւններով:

ԱՐԵԻԵԼՔ, իր վերակազմուած խմբագրութեամբ և իր կարող աշխատակիցներ

րով, առաջնակարգ տեղ մը կը գրաւէ տեղական հայ մամուլին մէջ:

Իր առաւելութիւններէն մէկն է ՊԱՏ-ԿԵՐԱԶԱՐԴ ըլլալու հանգամանքը, որով իր ընթերցողներուն կը ներկայացնէ պարբերաբար: Ծանօթ Դէմքեր և երբեմն ալ տեսարաններ: Ոչ նուազ կը գնահատուին իր մասնագիտական յօդուածները, եկեղեցական, կրօնական, տնտեսական-սեղանաւորական, երկրագործական, իրաւաբանական եւայլն, բայց ի գրական, բանասիրական գրուածքներէ, օրուան տեսութիւններէ եւայլն:

ԱՐԵԻԵԼՔի վերաբերեալ ամէն գրութիւն ու բաժանորդագին չպէտք է ուղղել Տէր և Տնօրէն Գարեգին էֆ. Պօյաճեանի հասցէին, Ղալաթիա, Մահմուտիէ Ճատտէսի, ուր հաստատուած են թերթին տպարանն ու խմբագրատունը:



ՏՆՕՐԷՆ-ԽՄԲԱԳԻՐ — ՎԱՀԱՆ ՓԱՓԱՋԵԱՆ

ԺԲ. ՏԱՐԻ ԹԻԻ 17

ՇԱՐԱԹ

22 ԴԵԿՏԵՄԲԵՐ 1907

ՀԻՒԱՆԴ ԳՐԱԳԷՏԸ

Ատեն մը կը տրանջայինք, ու արդար բողոք մը կը բարձրանար ընդդէմ հիւանդ գըրականութեան. հիւանդ է մեր գրականութիւնը կը պողայինք, հիւանդ՝ մեր գրական ասպարէզը, և ահա նոյն այդ բերանները կրկին կը բացուին, այս անգամ ոչ փոխարեւորաբար, այլ՝ գրականապէս ցաւելով կոչելով՝ հիւանդ է մեր գրագէտը . . .

Տիգրան Արփիար, մեր ջղուտ հրապարակագիրը՝ երեսուն տարիներ մամուլին ծառայելէ վերջ, հիմա ալ այս ցուրտ օգերուն՝ անկողնոյ կը ծառայէ Շիշլիի Պուլկար հիւանդանոցին մէջ:

Շիշլի ըսի ու կը սարսուամ, ինչո՞ւ այդքան մօտը փափաքէր է գանուիլ այն ցուրտ պարտէզին՝ ուր կը տանին տակել խամբած թոշնած ծաղիկները, ինչո՞ւ . . .

Այս հարցումը կ'արձագանգէ ականջիս ինչո՞ւ, բոլոր գիրի ու գրչի մարդիկ են այս խուլ արձագանգը կրկնողները, անոնք՝ ու

րոնք կը գնահատեն Տիգրանը, այն Տ. Ա. ը՛ որ իր համով հոտով քրոնիկներովը, նկարագրականներովը ու ֆանթազիկներովը հաճոյք առթած է գրասէրներուն, թերթերու, պարբերականներու և իր իսկ խմբագրութեամբ վարած Մասիսներուն միջոցաւ:

Հաւատացէք, զինքը սիրողներու և իր գրիչը յարգողներու լէզէոնը ալ աւելի պիտի տխրէր, երբ Մանգումէի իր ափյափոյ գրած նամակներուն ներքեւ փոխանակ՝ Բերա Շիշլիի՝ Եէտի-գուլէ դնէր: Այս մխիթարելի պարագան մեծապէս կը մեղմացնէ զինքը սիրողներու ցաւը, մտածելով թէ հիւանդը Տիգրան Արփիարն է, և ոչ թէ լեւալ խմբագիր մը կամ վարժապետ մը, որոնց հանգըստարանը ինչպէս գիտենք՝ Ազգային Հիւանդանոցը կըլլայ միշտ:

Կ'երեւակայեմ գրչի աշխատաւորին վիճակը այս պահուս, փաթթուած իր ձուլ ճերմակ վերմակին մէջ, մահճակալին խորը, և ըն-

կողմանած իր գրական փայլուն անցեալին խոհերուն խորախորհուրդ պատկերներուն մէջ: Խմբագիր, խմբագրապետ, վարիչ Տնօրէն, քրոնիկագիր, թարգմանիչ, բարենպատակ ձեռնարկներու՝ ինչպէս պարահանդէս, ֆոնսէն, դպրոցական հանդէս, ասոնց բոլորին շուրջ ըլլալ, փայլիլ ու փայլեցնել գրել ու գրուիլ, աշխատիլ ու վաստկիլ, գափնիներ որ չատ քիչերու կը վիճակի, ամբողջ թերթեր համեմել, կառավարել, սիրել ճշմարիտը, սիրուիլ բարիէն, և ՀԻՄԱ տարիներու յոգնութիւնը և այդ բոլոր ոսկեջնարակ գրական անցեալը, կծկիլ հիւանդանոցի մը հրկաթէ մանճակալին մէջ ... ահա ինչ որ բղձկել կուտայ մեզ, և ամէն անոնք՝ որոնք զինքը ճշմարտապէս կը սիրեն, առանց ո՛ր և է գրական ակնկալութեան:

Չեմ կրնար երեւակայել անհատ մը, ըլլայ գրչի, ըլլայ գործի մարդ, որ կարենայ հաստատել թէ՛ ո՛ր եւ է առթիւ ո՛ր եւ է պարագայի մէջ վշտացած ըլլայ Տիգրանէն, իր լեզուն գրչին էր, և իր գրիչը՝ իր սիրտը, իր զգացումը:

Ու հիմա որ այս տողերը կը գրեմ, կ'երեւակայեմ մօտն ըլլալ՝ իր մանճակալին վերեւը: Իր անբիծ ճակտին վրայ ակօսները թրջած, ոչ թէ իր հիւանդութենէն, այլ իր այնքան սիրած գրական հրապարակէն զերկուած ըլլալուն ցաւը արտայայտող պաղ քրտինքէն, ուր Հանրագիտակը կը կարդայ: Դեղերու փոքրիկ սրուակներուն մօտ, որոնք իր ֆիզիքականին, իր մարմնաւոր տառապանքներուն յատուկ դեղեր կը պարունակէն, թող մեր այս սրտաբուղիս և անկեղծ տողերն ալ յօգուտ և ի սփոփանք իր բարոյական ցաւերուն ըլլան զւ անոնց ընթերցումը՝ պահ մը կազդուրէ, վերականգնացնէ մեր սիրունած գրագէտը, համոզելով զինքը թէ՛ գրական քօլէկներ չեն մոռցած զինք, թէ Մամուլը՝ իր տաք վերաբերումը և սէրը կը շարունակէ տածել հանդէպ իրեն, և թէ ճշմարիտ և անկեղծ բարեկամներ միշտ աղօթող են իր շուտ ապաքինման. փափաքելով ժամ առաջ հեռացնել զինք այն ցուրտ Պարտէզէն, որ թէեւ շատ մօտը կը գտնուի, սակայն ժամանակը մօտ չէ:

Վ. ՓԱՓԱԶԵԱՆ

Յ. Գ. — Ուրախ ենք յայտարարելու թէ՛ մեր հիւանդ գրագէտին համակիր անձնաւորութիւններ հետզհետէ կը հասցնեն իրենց նիւթական՝ նուէրը, պարագայ մը՝ զոր հաճոյքով և սրտի գոհունակութեամբ կը յիշենք հոս, երանի թէ այս գեղեցիկ դաւաժարը արձագանգ գտնէր բոլոր գրասէրներու խըզճին, և եղած նուիրատուութիւնները շարունակուէին, որոնցմով միայն կարելի պիտի ըլլայ մոռցնել այն նիւթական մտածումները ու նեղութիւններն, որոնք բարդուելով ֆիզիքական ցաւերուն, կուշացնեն ապաքինումը ու զգալապէս կը յետաձգեն այն սպասուած օրին՝ երբ մեծ հաճոյքով պիտի տեսնենք իր ստորագրութիւնը՝ ՏԻԳՐԱՆ ԱՐՓԻԱՐ: ՆՈՅՆ

ՄԱՆԶՈՒՄԷԻ

ՆՈՐ ԳՐԱԿԱՆ ԶԵՌՆԱՐԿԸ



L Ո Յ Ս



ԳՐԱԿԱՆ ՀԱՆԴԵՍԻ ՎԵՐԱԾՈՒՄԸ

Մանզումէ օգտաշատ օրաթերթը, զօր ստանձնած էր ՀՈՅՍԻ հրատարակութիւնը իրրեւ Կանանց յասուկ թերթ, այս անգամ մասնաւոր կարգադրութեամբ մը և բացառիկ զոհողութիւններով կսկսի հրատարակել նոյն թերթը, իբրեւ զուտ գրական հանդէս, որուն կազմութեան, ձեւին և պարունակութեան մասին խօսելու համար պէտք է ըսենք թէ՛ մինչեւ հիմա երբեք նմանը չի տեսնուածը պիտի ըլլայ, և որուն խմբագրապետութիւնը պիտի վարէ ծանօթ գրագէտ-հրապարակագիր՝

ԱՐԱՄ ԱՆՏՈՆԵԱՆ

Ընթերցասիրութիւնը որ օր քան զօր կաւենայ մեր ժողովուրդին մէջ, արդարեւ զգալի կըլլայ պակասը իտէալ շաբաթաթերթի մը, զուտ գրական, ճոխ, համեմուած և պատկերազարդ, առաւելութիւններ՝ որոնք կը փնտռուին ճաշակի տէր ամէն գրասէրի կողմէ:

Ուրեմն շաբաթ մը եւս, և ահա պիտի երեւի ՀՈՅՍԸ, զոր ի դերեւ չպիտի հանէ ամէնուս յոյսը:

ՀԱՆՐԱԳԻՏԱԿ

ԱԼՊՕՄ

ԿԱՂԱՆԴԻ ԹԻԻ ԲԱՑԱՌԻԿԻՆ ԲԱՑԱՌԻԿԸ

Հանրագիտակի Տնօրենությունը փառալեր-
ուած այն շերտ ընդունելութեան՝ զոր երբեք
չեն զլացած ցոյց տալ Պատ. Ընթերցողները,
ամեն տարեգիտոյ առթիւ հրատարակուած բա-
ցառիկ քիւերուն համար, այս տարի բոլորո-
վին նոր եւ նման չի տեսնուած ծրագրով մը
պատասխանած է թիւ մը, որ իր տեսակին մէջ
միակը եւ մի միակը կրնայ համարուիլ:

Նկատելով որ հանրութիւնը զգուած է
այլ եւս sur mesure յօդուածներէն, որոնք
Կաղանդի պտղալից ափսէի մը պէս միայն
այդ օրին կուգան զարդարել ո՛ր եւ է թերթ,
այս անգամ որոշուած է ներկայացնել նոյն
պատկերներ՝ ինչպէս ՊԱՏՐԻԱՐԲներու,
ԵՊԻՍԿՈՊՈՍներու, բոլոր լրագիրներու ԱՐ-
ՏՕՆԱՏԷՐներու, ԽՄԲԱԳՐԱՊԵՏներու, ԱՌ-
ԹԻՍԹներու, ԲԺԻՇԿներու, ԴԵՐԱՍԱՆներու
եւ ԴԵՐԱՍԱՆՈՒՀԻներու, ՏՊԱՐԱՆԱՊԵՏ-
ներու, որոնք բոլորովին անտիպ են հան-
րութեան համար եւ յոյժ հետաքրքրական:

ՀԱՆՐԱԳԻՏԱԿ ԱԼՊՕՄին մէջ իրենց սը-
րամիս Ֆանքերները պիտի բերեն կցել՝
ԱՄԷՆՈՒՆ ՏԱՐԵՑՈՅՑԻՆ հետոյ:

ԹԻՆԴԻԿ

ՍՍՐԳԻՍ ՍԱԳԱՅԵԱՆ եւ ...

ԼԻԼԱ

Եւ զտեսնուած պատկերները որոնք յա-
կապէս շինել տուած են ծանօթ արուեստա-
գէտ Իւրիւնեան Էֆենտիի, պիտի տպագրուին
գունաւոր, ՍԷՐՎԷՐԻ ՖԻՆՈՒՆԻ առաջնա-
կարգ տպագրութեամբ ԿԼԱՍԷ քուղթի վրայ:

Եւ այս բոլոր բազմաթիւս գոհողութիւն-
ներով յառաջ եկած անօրինակ եւ մեկ հա-
սիկ թերթը պիտի ծախուի ի գին՝

ՅԱՐՈՒՇԻ

Գաւառներու համար 3 1/2 դրուէ:

Մեր գաւառի գործակալներէն կը խնդ-
րենք որպէս զի քանի հաս որ կուգեն ունե-
ցալ՝ 3 1/2 են հաշուելով դրամը անմիջապէս
մեզ հասցնեն Մանասթուրիով:

ՀԱՄՈՎ ՀՈՏՈՎ ԽՕՍՔԵՐ

[ՖԱՆԹԵԶԻ]

Աղւոր աչքեր երբոր ձեզի բակարդեն,
ձիգ ջանք քրք պրծիլ տուտ այդ բակարդէն:
Երբ սիրաւորած ակնարկներ ձեզ կը բովեն,
Արբօն սէր է յարգի է այդ կոթողէն:

Այսօր ժպիտ, վաղը ծիծաղ, ետքէն լաց,
Լոկ բաժին են պատանեկի մեծակեաց:

Անուշ է ո՛հ, կեանքի զարուն, երբ սէր չիք,
Մի դեզերիք մերք հոս մերք հոն գերդ ջրդիկ:
Երբոր ունին դաշինք դրնէ տայ խոստում,
Լոկ ձեզ սիրել ... բացող չի այդ ալ ոստում...:

Գեղունիքն սիրան է իրօք գերդ ծովակ,
Արեւոյն ... խորխորտ, վրիճ... ու ծուղակ:

Լաւատեսի խոհերով լոկ դուք ընդ միտ
Համակերպիլ գիտցիք սիրոյն՝ միտ անվիտ...:

Նեղ սիրտ մըլլաք համբերատար ու դատող,
Երբոր ըլլայ, կը սիրեն ձեզ իսկ անող:

Վերջը չի կայ կ'ըսեն ծերեր սիրերգին,
Զ'են յիշեր քե ... մոլին երբ սէր-երգին:

Նախորդ տարին չ'իկար կ'ըսեն հասն մարդ,
Զեն խորհիւր քե խոհերդ են գեռ տղամարդ:

Մամիկի լաց ... բաժանումի վայ բերան,
Կ'ըլլաք քեռ, ետքն ալ կ'ըսենք վա՛յ ... բերան:

Նաղելանեմ փայլածով մեկն երբ գովեն,
Անհրաժեշտ եղողն ալ վար է կովեն:

Փափուկ սեռին գեղ ու տեսն է նուրբ իրան,
Երբոր բովել գիտէ քեկնածուքն իր Ան:

Մարդիկ կան որ կը պաղատին միտ Տէ՛ր, Տէ՛ր,
Հալ ու մաշ սիրան ալ կուցենայ իւր տէրէ՛ր:

Քիթիփիոս եղողն ինչո՛ւ կը պանծայ,
Զ'ըսէք իրեն աղւոր կ'ըլլաւ դուն ծրնդա՛յ:

Երբ խրկարկուն պըջուհիքն սէր-բուրվառ,
Կը ծըխէ ... միտ, Նէ կը գոչէ դուն bavar՝:

Սերն է պատրուկ երթական ալ յանգարան,
Թէ ասակ եւ կազմէ անով բանգարան:

Սակայն ըզգոյշ եղիր ուրիշ չի կարդան,
Վեպրդ-կեանքիդ մէն մի գաղտնիքն անխափան:

ԱՐՇԱԿ Դ. ԻՍՊԷԶԵՐՅԱՆ

ՄՐՑԱԿԻՑ ԴՐԱՑՈՒՅԻՆԵՐԸ

[Թ Ա Պ Լ Օ]

Չունիմէն ո՛վ կը հասկնայ, չըկային նշանակութիւնը ո՛վ կ'ըմբռնէ, ո՛չ քահանաները և ո՛չ ալ կիները, երկուքն ալ փեշաւոր դասակարգ, երկուքն ալ պատրաստ, մեղկ, թոյլ կեանքի մը մէջ տապալակող քոյր-հոգի աղբարիկներ, առաջինը փոխան տասը զրուշի՝ բեմէն կը յօժարի՝ սինլքոր կեղծ բարոյապաշտի մը միլիոններ, բիւրեր պարզեւել՝ անշուշտ բարեմաղթելով, իսկ երկրորդը՝ անյագ, սպառող մեքենայ մը անխնայ պահանջող, առանց մտածելու:

Մրցումի դարուն մէջ ենք թէպէտեւ իսկապէս, սակայն ինչպէս օտարներու բարքերը սխալ ըմբռնելով կապկած ենք, նոյնպէս ալ մրցումը մեզի համար կը կայանայ, խնջոյքի, հաճոյքի, հագուստի, կապուստի վերայ: Զիրար գլել անցնելու մարմաջը այսօր՝ այնչափ արմատացած է Հայ տնտեսներու մօքին ու սրտին մէջ, — բացառութիւնները մէկդի —, անձնական փորձառութեամբս կըրնամ ըսել թէ՝ հայուհին սոսկալի մրցող մըն է իւր ընկերուհւոյն միակ հագուստին ու կապուստին և կամ խնջոյքին, որոց մասին ուրիշ առթիւ մը խօսիլ կը խոստանամ, եթէ ազնիւ բարեկամս Լիլա ներէ: (Ինչո՞ւն է Լ.):

* * *

Օր առաջ տրուած որոշումի մը համաձայն, զորս հայ տիկիներ և օրիորդներ — մրցակից դրացուհիներ — բէշերնին ժողված, շուկայի ճամբան ձեռք կառնեն ձմեռուան նոր զգեստներ գնելու դիտումով, ու մի քանի պատրաստ հագուստի վաճառատուներ դեգերելէ վերջ, իրենց ճաշակին (?) յարմար բան մը չգտնելով՝ կը մեկնին դէպի ծանօթ կերպասավաճառի մը խանութը:

— Բարե՛ւ, միւսիւ Դրիգորիկ, կէօղիւն սօղուտո՞ւ մը, եղբւր միւշթէրիէր կէլտի իշթէ՛ սանա . . . :

— Ասծու բարին Տիկին, պուլուրուն, հրամանեցք Օրիորդներ, ըսելով՝ միւսին աթոռները իրար կանցնէ (չտկիւղու նորձեւ մը)

իրը յարգանք և մեծարանք իւր նօսօշիկ եղբւր միւշթէրիներուն:

Մայրիկին քեյֆը, հայրիկին խաբը, դրացիներուն վրայ քիչ մը պօշպողաղութենէ վերջ, վերջապէս կսկսի առեւտուրը: «ԳԵՂԸԳ պիր ժաքէթլիք պանա օլաճագ գաբագլը, օրիորդ նոյնաղարա պիր ֆիսթանլըգ, Անթառամ տուտուեա պիր քիւրք գապլըգ, տահա չօգ չէյլէր պաճաղըղ ամմա՛ իլէրուտէ, շիմտիլիք պու դատար», կը ձայնէ նազելափալիլաշուք տիկին Մարիամ:

— Բեր ծօ՛, կարպի՛ս, սա նոր եկած եռնլուները, տիկիներ լան մը տանք, պարէ՛ անմրօ ընէ մեզի, եապանճը չենք եապկամպիլ օրթաղըմ տըր, կը գոռայ թէգկեահատարը:

Կերպասի թօփերը կըսկսին բացուիլ, գոյնզգոյն թելերով բանուած նրբենի արհեստներ, որոնք դժբաղդաբար միշտ անհաճոյ տպաւորութիւն մը կը թողուն մեր գնորդուհիներուն վրայ:

— Հի՛չ կէօյնիւնէ եաթմայօր գուզո՛ւմ օղլում, տահա պաշկա նէ՛ չէշիտլէրինիզ վար, գըղլա՛ր, պէնիմ կէօյնիւմէ հիլ պիրի եաթմատը սիզ նասըլ, ըսելով ձեռքովը կը հրէ ապրանքները:

Խանութպանը նեղացած այս սասե սուեա չօրպա միւշթէրիներէն, սրտնեղութեամբ մը կը պատասխանէ:

— Պուլտուղընըզա շիւքը էտին Տիկին, պուշլարա պիզ ալուճլա լիրա վէրիյօրուզ եինէ կիւճ իլէ չէշիտ ույտուրապիրիեօրուզ, սիզ նէ՛ տէրսինիզ, իքի պին լիրալըգ բէրէքէնթէ մաղազատա մալ պէյէնմէմէք . . . , նէ՛ տէրսինիզ օրիորդներ, օտարներէն ամենաբարձր ազնուական ընտանիքներուն մեծագոյն մասամբ մենք ապրանք կը հայթայթենք, ցաւալին այն է որ՝ ձեզի չը կըցանք ո՛ր եւ է տեսակ մը հաւնեցնել:

— Անոնց ճաշակը ուրիշ է պարոն, հետեւաբար մի սրտմտիք, ուրիշ տեղ ալ պիտի նայինք, եթէ չըլլայ, այն ատեն դարձեալ որոշում մը կուտանք, ըսելով՝ կը մեկնին, ճիշդ մէկ ժամ պօշպողաղութենէ վերջ, խանութպանը միտքէն կանցնէր այն ամէն բաները՝ ինչ որ կանցնեն կիները՝ Լիլաի համար:

և կամ ուրիշ վրան բաց յօդուածներ դրողներու համար, որոց մասին՝ ցտեսութիւն։

— Նա ծօ՛՛ Միհրան, տիւյիւնտէքի բիւիճ կէլիեօր, չաղը՛ր, շունատա պիր ֆիսթանլըգ վէրիբիդ պէլքի, կըսէ խանութին խալֆան, ընկերոջը ցոյց տալով վերի մեր քառեակ խումբը։

Պուլուրուն, հրամմեցէք, ընտիր ձմեռուան ապրանքներ բերինք, սքանչելի՛ պան, մէյ մը ղիտեցէք Տիկիւններ, նորէն մի առնէք, հրամմեցէք։

— Հայտեցէ՛ք աղջիկներ, սանկ Միհրանիկը երթելովն կըլլայ կոր, երթանք անգամ մը աչքէ անցընենք, ըսելով՝ կերթան կը բազմին խանութին առաջը շարուած աթոռներուն վրայ։

Նոյն յանկերդը, նոյն թափթփածութիւնը, սինսիլէին քէյֆը չը հարցուցած գործ չուներք վէսսէլամ, ինչ և իցէ, ինծի նայէ՛ միւսիւ Արամ, սանկ ըստուրալը խումաշ մը կուզեմ, նաֆիլէ էղիյէթ մի տար քեզի, հարկը հոտ թօփ հանելով, կըսէ այս անգամ փոխանորդ տիկինը, որ միւսիւին դրացիներէն ըլլալ կը թուէր։

— Մէրաք մի ընէք տիկիւններ, հիմակուանը չենք ես՝, մեծ մօրմէս արդէն կը ճանչնանք ղիրար, օրիորդները բան մը պիտի չառնեն, կըսէ խանութպանը, միշտ մտածելով շաբթուան վճարուելիք պօնօին վրայ։

— Ինչպէս չէ, օրիորդին ֆիստանցու, ինծի ժաքէթցու մը, տիկիւնին քիւրք խապի, եթէ Նոյեմդարս ալ հաւնի նէ՛ անոր ալ կըտրել կուտամ պուսթօ մը և ֆիսթանցու մը, կըսէ տիկին Մարիամ։

Քէլէիիբի եագալատըգ, մալ տալով մեր խանութպանը հոգի ի բերսն երկու ժամուան մէջ հաղիւ կրնայ կերպաս հաւնեցընելով կտրել՝ ու անմիջապէս ծրարելով յանձնել, մեր գնորդուհիներէն վախնալով որ մի գուցէ մէկէն ի մէկ բիււման ըլլան։

Ասոնց դրամները կը գրէ՛ք տէ, իմա՛ Բերովբիկ աղայէն, աղջիկներունը՝ Կիրակոս աղայէն, իսկ տիկին Մարիամինն ալ՝ հանի վարը պէրպէր մը կայ միւսիւ Օգսէն անուանով՝ անկէ կառնէք։

Հօշաֆըն կաղը պուլ։ Խանութպանին երեսը մի տեսնաք, պապանծումն Զաքարի-

այի, ո՛չ խօսք և ո՛չ պատասխան, մինչ տիկիւնները՝ հայըրը գըսմէթ օղլում, էյի միւշթէրիէր ըսելով՝ կծիկը կը դնեն, առանց նկատի առնելու խեղճ խանութպանին դրամական նեղ կացութիւնը։

— Մէյ մըն ալ ձեզի հետ ճամբայ ելլողին ... չեմ գիտեր ի՛նչ ըսեմ, երեք ժամ է ֆըրց ֆըրց սիւփիւրիւճիւ կիպի շուկան ալթիւսթ ըրինք, նէ իմիշ պու իքի եիւզ ղուրուշուգ ալըշվէրիշ, օ տա վէրէսիէ, կը ձայնէ տիկին Մարիամ, որ կէս դար առաջ ծնած ըլլալով՝ քիչ մը սրտնեղ կը ցուցնէր ինքզինքը, չըբըրտամ մատմազէններուն։

— Պրա՛գ, աղզըմը աչտըրմա, կը պատասխանէ մեր Անթառամ թառամածը, պողաղմա գատար կէտի գայրի, չիմտիքիէր գըզ տէյիլ քի՛ վըզ, ալան չէլէնկ թագսըն, պիր ֆիսթան ալընաճագ՝ ծնու պէյէնմէմ, պուսուս պէնէքլէրի պէոյիւք, շունուն ըէնկի գօեու, հէր շէյէ պիր մահանա, ա՛խ, Ալլահ սապըրըգ վէրսին սիզէ տիւշէն էրքէքլէրէ, տիրի տիրի ատամ էօլտիւրմէք հիչ պիր շէյ տէյիլ ըսելով կը մուտայ։

— Մի նայիր դուն ան տըռտըռին խօսքին քա Արա՛քս, արդէն աճէլէով բա՛ն մըն է կտրել տուի, հիչ կէոյնըս չը պառկեցաւ, պարէ քուկիւնէդ կտրել տայի կըսէ մեր մատմազէլ Նոյեմդարը։

— Աման քա՛ Նոյեմի դո՛ւն ալ, տընտըքի էս վէսսէլամ, ես ալ չը հաւնեցայ իմինս ամա՛, ի՛նչ ընեմ, անգամ մը կտրել տուի, պօլ սիւս մը զաբնել կուտամ վրան պարէ ուղածիս պէս։

Ճամբու այս խօսակցութիւնը՝ վերջ կը գտնէ Յոյն մօտիսթի մը դրան առջև, տուենէն ներս նորոգուելու պայմանաւ։

— Մատմազէլ Մարիքանըն էվի պուրա՛սը մը տըր, կը հարցընէ մեր օրիորդներէն մին, հաճոյքով մը ներս ցատկելով սեմէն։

— Պուրասը տըր մատմազէլ, նէ իսթէր վար եագաճագ իշ, պուլուրըն եօգարտա, քէնտի սիմտի կէլէճէք, կիթտի պիրաղ մատամ Գապագեանա գատար, օրիսթէ մատեամո՛ւ։

Դերձակուհւոյն օգնականը, Յոյն աղջիկներու յատուկ շնորհալի կացութեամբ մը (ականջը խօսի Տիկին Ի. Էնքսէրճիեանին)

մօտէնները կը ներկայէ մեր բաքէթ ի ձեռին տուտուններուն, որպէս զի յարմարագոյն ձեւ ժը ընտրեն:

Ի զո՛ւր քննութիւն, ի զո՛ւր զննութիւն, կէս ժամ, մէկ ժամ՝ դեռ որոշում ժը չկայ, մինչ օրիորդ դերձակուհին դուրսէն կը հասնի բարի գալուստ մաղթելով մեր յաճախորդուհիներուն:

— Թի՛ թրէ՛ի մատմաղէլ, թի՛ նա քա մու, թի՛ ֆիսթան, պուսթօ թի ...

— Մատմաղէլ բուժմա սէօյլէմէյին, չիւն-քի պիլմէյիզ, թիւրքէէ իսթէրիզ, պանա պիր ֆիսթան եափաճագսըն, մատմաղէլ Ա-րաքսիէ տէ հէմ ֆիսթան հէմ պիր պուսթօ, լաքին նէ գատար փարա իսթէրսէն վէրէճէ-յիզ, անճագ էյի օլմալը, պաչգասընտա օլ-մամալը պիզտէ օլան, անլատըն մը:

— Անլատըմ մատմաղէլ, պէն եաքածագ սիղէ հանի բուպա, պասգա եօզ պիր մօ-տիսթրա, հանի եաքածագ: սիղին մօտիսթ-րալար տա հից եափամազ պէնիմ կիպի, նա՛ իսթէ սիմաի պու ֆիսթան մատամ Գապագ-եանըն տըր, կիթտիմ բրօվա եաքալըմ, վար քուսուր, օնուն իչին եինէ կէրի կէթիրտիմ:

— Պիզ պիր մօտէլ պէյէնտիք մատմաղէլ, պագ պուրտա տէօրթ սըրա չէրիտ վար գու-լէլի, պու սըրալը արթըրալըմ տա ալթըլար եաքարսագ օլմա՛զ մը ...:

— Նիցին օլմա՛զ մատմաղէլիմու, սիղէ մօտէլտէն տըսարը եաքարիզ, լաքին մատ-մաղէլէ սօղրա նէ՛ եաքածանեղ, ցիւմքիւ-օտա սիղին կուսթօեու պէյէնմէյէժէք, կըսէ հեյլէնուհին:

— Պանատա պու ֆիկուրինտէն եաքար-սըն տանթէլալը, անճագ պունտա իւչ սըրա վար: պէնիմքինէ պէչ սըրա տիքէրսին, տա-հա էյի օլուր, կըսէ օրիորդը:

— Յօզ էյի օլուր ամա մատմաղէլ, կը յարէ դերձակուհին, օնունքի մօտէլտէն տի-տարը օլտու, սիղինքի տէ ինսանտան տիսա-րը օլուր, սօղրա կիւլէժէք հէրքէս, սէնին-քինէտէ իքի սըրա տանթէլա գօեալըմ, հէմ տահա սեմբլը օլուր, հէմ տահա կուսթօլը, օլմա՛զ:

— Չօզ տիւզ օլաճագ իսթէմէմ քա՛ էօյլէ շէյ, կէնէ պիրազ բարլագ օլմալը քի կիյին-տիյիմ վաղըթտա հէրքէչին կէօղիւնէ չարքսըն:

— Դարար էօյլէ տէմէք մատմաղէլ, քիմ-տէն ալաճագ պիզ պու տանթէլա, հարժ, մագարա, գորցա, եօզ սիղին պիր բօսթօ-լէնէ ...:

— Նա պիր գաղաղ վար, հանի միւսիւ-նիրատ տէրլէր, օնտան ալ սէօյլէ պիզիմ ի-չին, մատմաղէլ Բաթլիճանեանլար, օ վէրիւր:

— Ա՛, մատմաղէլ սիզ ալըն կէթիրին, պէն կէցէն կիւն մատամ Գապագեան իցին կիթտիմ ալմաղա վէրմէտի, տէյօր քի հէր-քէսէ վէրէսիյէ վէրմէյօրուզ, ցիւնքիւ պու սէնէ պէօյլէ, օնու իցին հէրքէս քէնտինէ կէօրէ սիւս եաքսըն տէյօրլար, ցօզ մէսարիֆ սէնէլէր տէյիլ:

Արդեօք Յոյն դերձակուհիին այս ըսած-ներէն բան մը հասկցա՞ն մեր հայ տուտու-ները, չեմ գիտեր, սակայն սաչափը գիտեմ թէ անոնք՝ այդ քառեակ խումբը, լարկա-ցած՝ բաքէթները ձեռքերնին ուրիշ դուռ մը ափ առած էին մուտալով՝

— Փօսթալա պա՛գ, փարա վէրէճէիզ, պիր տէ օնուն գուռտ մասալընը տիյնէմէլի...: Դալէ քա աղջիկ ...:

Էջիւրնէ

ԳԷՈՐԳ Մ. ԱՐԲԱՀԱՄԵԱՆ

ԳՈՑ ՆԱՄԱԿ

ՈՐ Ի ՀԱՐԿԻՆ ԿՐՆԱՅ ԲԱՅՈՒԻԼ

Պր. Ինքնակոչ պաշտպան Ինքնեան ԷՖ. Ի

Կարդացինք ձեր գլուխ գործոց գրուած քը, որուն մէջ պաշտպանած անձերնիդ խաբանել նկրտած միջոցնուդ շատ բան տուժած էիք տրամախոռոթներէ:

Հիմա կ'ըմբռնենք թէ՛ ինչո՛ւ Մարկոս էֆ. Նաթանեան ժամանակին, իսկ Թէոդիկ էֆ. Ներկայիս մէջ անպատասխանի թողած են ձեր պաշտպանելին՝ ձերինին համարժէք գրուած քները:

ՇԱՔԱՐԵՂԷԳ

Յ. Գ. — Մեզ համար փակուած կը հա-մարինք այս գրական վէճը, և կը յուսանք թէ՛ մեր ընթերցողներն ալ գոհ պիտի մնան մեր այս կարգադրութենէն, քանի որ թեր-թիւ մէջ ֆեռականութիւն չիկայ այլ ... խըն-դուք և զուարճութիւն:

ԽՄԲ.

ՍԱՄԱԹԻԱՑԻ ԵՐԻՏԱՍԱՐԴԸ

[ԿԷՍ ԼՈՒՐՋ ՅՕԴՈՒԱԾ]

Բերացի, Գատը-գիւղցի, Սկիւտարցի, Գուժ-գաբուցի երիտասարդ և ուհիները մինչև հիմա ունեցած են իրենց մէկէ աւելի նըկարագրողները, իսկ Սամաթիացին՝ եթէ չ'եմ սխալիր, բնաւ չ'է ունեցած տակաւին:

Եւ որպէս զի սիրելի ընթերցողներուս և ընթերցողուհիներուս յարգանքին արժանանամ ու կարգացուիմ՝ հարկ կը համարիմ յայտարարել թէ՛ այս տողերը գրողը Սամաթիացի չ'է, այլ ... Եէտի-գուլէցի:

×

Սամաթիացի երիտասարդներուն հարիւրին յիսունը ոսկերիչ կ'ըլլայ, քառասունը վաճառականի գործակատար, իսկ մնացեալ տասը՝ ուրիշ ո՛ր և է արհեստաւոր:

Սամաթիացի երիտասարդը հօրենական ժառանգութիւն ունի ... ընտիր հայհոյութիւններու ... թանկագին պաշարը, զոր գիտէ պէտք եղած ժամանակ գործածել կատարեալ ձեռնահասութեամբ, ու անգամ մը որ բանայ անոնց ծրարը՝ բնաւ չի նայիր թէ դէպի ո՛ւր կը դիմէ փափկանկատութեան նըժարին լծակը:

Սամաթիացի երիտասարդը նոյնպէս ժառանգականօրէն ճերմակ ջուրը խնկողներէն է:

Սամաթիացի երիտասարդը կատակասէր է ու զուարճախօս, նաեւ կարող պատրաստաբան, կտրծեմ սա ալ պապենի՛ ժառանգութիւն ...:

Սամաթիացի երիտասարդը զգայուն է ... Լիւմիէրի բլաքներէն աւելի, բայց Բալիւքայի պարօմէթրէն նուազ: Աղաւնիի կամ Հոռոփիի մը մէկ նուաղ կոտ ականքը՝ բաւական է անջնջելի արձանագրութիւններ թողելու անոր ... փափուկ սրտիկին վրայ, և սակայն զայն խոստովանելու համարձակութիւնը կը պակսի իր քով:

Սամաթիացի երիտասարդը պատուհանի աղջիկներուն միայն կը պարտի իր սիրային յաղթանակները, զոր սակայն ... կոյսի կեղծ մօթխածութեամբ մը ծածկել կը ջանայ,

հիւժեւով երկար տարիներ, առանց նշմարուելու ...

Սամաթիացի երիտասարդը եւրոպական երաժշտութենէ ա՛յնքան բան կը հասկընայ՝ որքան այս տողերը գրողը՝ Ճաքոններէն ... իր օղիարանութեան «հոգւոց» ը նանե շեֆերի եղանակը կը կազմէ ...:

Սամաթիացի երիտասարդութիւնը ... գինեպանական ձեռնարկները քաջալերողներէն է, ասոր կարկառուն ապացոյցն է՝ գինեպան Գարագաշին Մագրի-գիւղէն կրկին Սամաթիա վերադարձը:

Սամաթիացի երիտասարդը եկեղեցասէր է, ինչպէս կը յիշատակէ շատ անգամ Փոխանորդ Սրբազանը՝ իր քարոզներուն մէջ, բան մը որուն ... հաւտալս չ'իզար չիտակը: Թերեւս նախորդ սերունդը այդպէս եղած է, բայց ներկան՝ կարելի է ընդունիլ՝ «եկեղեցասէր» բառին ամէնէն ... անցուկ իմաստովը միայն:

Սամաթիացի երիտասարդին խտէալը շատ բարձրերը չի սաւառնիր, — 500 ոսկի դրամօթիսով աղջիկ մը, մէկ սպասուհի (որ ... ազեղ ըլլայ) ու մէկ սպասաւոր: Եւ այս ամէնը գիտէ՝ թէ ուր վայելել կ'ուզէ, — Բերա, կամ գո՛նէ Գատը-գիւղ բնակելով:

Սամաթիացի երիտասարդը իբր ժամանցի վայր ունի Վարդանի սրճարանը, Նարլը-գաբուի ծովեզերեայ պարտէզը, գարնջրատուններն ու անուանի կապելաները:

Սամաթիացի երիտասարդը պարզասէր է, սակայն անշուշտ բացառութիւն ըլլալով, double օձիքները մեծ բնդունիլուն գտած են իրմէ, զոր փողկապին հետ հաշտեցնելով ... գիրկնդխառնելու համար ինչև'ր կը քաշէ հայելին առջեւ:

Սամաթիացի երիտասարդը զբօսասէր է, բառին լայնարձակ առուծովը, ամառը գո՛նէ մէկ անգամ կ'այցելէ գլխաւոր գիւղերը, ամէնէն ալ օղիի համեր խելելով, իսկ ձմեռները մինչև բարեկենդան կրնաք հանդիպիլ իրեն Բերայի 5 շրուշնոց պալօզներէն սկսեալ մինչև ոսկինոց պարահանդէսներուն մէջ:

Սամաթիացի երիտասարդին պիտի հանդիպիք անպատճառ հոն՝ ուրտեղ դրօսանք կայ: Ամէն թաղի կամ գիւղի մէջ, ո՛ւր որ

ալ երթաք՝ պիտի գտնէք անոնցմէ գո՛նէ հատ մը, իբր *échantillon sans valeur* ...:

Սամաթիացի երիտասարդը՝ գրական դաշտին վրայ արածուելու մարմաջը չ'ունի, (լըրագրապետներուն աչքը լոյս) և ոչ ալ գրական թերթ կը կարդայ, շատ շատ տասնոց օրաթերթ մը: Լուրջ *statistique* մը տեղեկացած եմ որ «Հանրագիտակ» միայն 120 ընթերցող ունի հոս:


Սամաթիացի երիտասարդը դպրոցատէր է, բառին ամէնէն պօռնացող իմաստովը ու խիստ ակնածանօք կը վերաբերուի խոպան արտերը, ի՛նչ կ'ըսեմ, խոպան միտքերը կ'ըսելու դարբնելու պաշտօն ունեցող մշակներուն (իմա վարժապետներուն) նկատմամբ: Այնքան կը սիրէ, ա՛յնքան կը սիրէ որ փառաւոր տփոցներ կը նուիրէ անոր ... անշուշտ հետեւելով փոխադարձի սկզբունքին: Դարասկզբիկ նորութիւն մը թերեւս որ իր արդարանալի կողմերը ունի իմ կարծիքովս ... ու խիստ խրախուսական է կրթական տեսակետով ... քանի որ ամէն մարդ իր սիրած էակը կը ծեծէ ...: Հոս՝ վարժարանին մէջ երբ տղայ մը վարժապետէն ծեծ ուտէ՝ սպառնական գլխու երերումներով չի գոհանար ուրիշ թաղերու տղոց պէս, այլ կը պօռայ վարժապետին երեսն ի վեր «Դուն ինձի զարկի՞ր, կեցիք ես աս գիշեր եղբօս (կամ հօրս) ըսեմ քե քեզի աղուոր տայախ մը քաշէ» ...:

Ահա՛ թէ ինչո՞ւ ստորագրելու կը վախնամ: Գրելուս զղջացի, բայց ... գրած գտնուեցայ: Լուրջ նիւթերու վրայ գրէ՛ տըղաս կ'ըսէր մեծ հայրս, որ ... ստորագրութիւնը դնել չ'էր գիտեր, ու ես այդ փորձերու մէջ այնքան չի յաջողեցայ:

Նորէն լուսահոգի Պ. Լափալիսին պիտի դիմեմ ես ալ, ուրիշ շատերուն պէս, որպէս զի կարենամ նշմարել տեսակաւ զի ծերը ի յայտ բերել, ... թէեւ բնածին ձիւքերս ուրացած ըլլամ այդ կերպով ... , ի՛նչ կ'ըսէ նայինք Պ. Լափալիս Եէտի-գուլէցիներուն համար:

«Եէտի-գուլէ կրնայ առատ մաւրուլ արտադրել, իսկ ... գրագէտ՝ երբէք»:

ԿՈՊԷՌ ԶԷՔԻՄԵԱՆ



ՎԵՐՋԱՊԷՍ ...

ԵՒ ԱՀԱ

ԱՄԷՆՈՒՆ ՏԱՐԵՑՈՅՑԸ

ԱՄԷՆՈՒՆ ԶԵՌԲԸ

ՓՈԽԹԱՅԷՔ

ՍՈՎՈՐԱԿԱՆ ԳԻՐՔ ՄԸ ԶԷ՛

ԶԻ ԳՆՈՂԸ ԿԸ ԶԶԱՅ ՈՒ...

Կ'ԱՄԱՂԷ

ՀՅՂԻՆԱԿԸ ԹԻՈՂԻԿ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆԸ՝ ՏԷՐ-ՆԵՐՍԷՍԵԱՆ

Էջե՛րը՝ 400, պատկերներ՝ սքանչելի և ճոխ, պարունակութիւնը՝ լեցուն, պեսպիսութիւններ՝ գլխու մազերու չափ, յօդունածներ՝ հատընտիր, գիտելիքներ՝ անհամար, տպագրութեան մաքրութիւնը՝ անօրինակ, թուղթը՝ հիմնալի, կա՛զմը՝ գեղեցիկ, և ի վերայ այս ամէնայնի գինը...

ԻՕ ՂՐՈՒՇ

Ահա օրուան գիրքը զոր կը պարտինք օրուան դէմքերուն ՓԵՌՊԵՅԻ և ՏԷՐ-ՆԵՐՍԷՍԵԱՆ եղբայրք:

Տէր-Ներսէսեան թղթավաճառատունը ուր պէտք է դիմել գրական 1908ի մանանան ձեռք ձգելու համար իր տիպար տպագրութեամբ օրուն նմոյշը ԱՄԷՆՈՒՆ ՏԱՐԵՑՈՅՑԸ կրնայ համարուել՝ անմրցելի վիճակի մէջ հասած է այսօր, ՄԱՔՐՈՒԹԻՒՆ, ՃԱՇԱԿ և ԱԺԱՆՈՒԹԻՒՆ:

ԶԷ՛ ԽԱՆԱՏԱՐ

Գնեցէք ԱՄԷՆՈՒՆ ՏԱՐԵՑՈՅՑԸ ու ԱՆ պիտի համոզէ ձեզ:

Կեդրոնատեղի Կ. Պոլիս Պահլէ-Գարու ՏԷՐ-ՆԵՐՍԷՍԵԱՆ վաճառատունը:

ԿԱՂԱՆԴԵՆ ԱՌԱՋ

Ամէն անոնք՝ որոնք հինգնոց մը տալով գացին Բրքի Շանի տախտակ նստարաններու վրայէն ծափահարել Կուճօի Ֆառսքը, անշուշտ տեսան թէ առաջին վարագոյրին ծերունին Տօքթ. Բոսքը կաղաչէր, կը պաղատէր, կը պօռար, կը գոռար, որպէս զի նեաելով իր այնքան մը տարիներու ծերունի բեռը կըռնակէն, երիտասարդանայ, սիրէ ու սիրուի, վերջապէս ըլլայ ան որ էր վաթսուն տարիներ առաջ, և ուր Սատանան կուգայ, լսելով անոր ձայնը, ինչ ինչ խօստումներ կորզելով անկէ, մէկ ակնդարթի մէջ կը շնորհէ կը պարգևէ անոր՝ թարմ երիտասարդութիւն մը, ինչպէս վաթսուն տարիներ առաջ:

Ահա ձեր ծառան ալ — և կարծեմ ինծի հետ շատ մը ծառայ Տեառներ — Տօքթ. Բոսքին պէս, տարեգլխոյ այս մօտ օրերուն կ'աղաչենք, կը պաղատինք, կը պօռանք, կը գոռանք, որպէս զի ետ երթանք, ետ մինչեւ մեր այն տարիքը, երբ մամաներնու ծոցը կը պառկէինք, հացագործին ձիուն պոչը կը փետտէինք, տաննոց պուլամածին հոգի կուտայինք, և Կողանդին չորս աչքով կըսպասէինք հայրիկէն մայրիկէն մէկ մէկ նուէր ստանալու համար:

Երանի՛ պղտիկներուն, երանի՛ նոր հարսերուն, երանի՛ նշանած օրիորդներուն, երանի՛ մրգավաճառներուն, երանի՛ խաղալիքավաճառներուն, վերջապէս բիւր երանի՛ ամէն անոնց՝ որոնք բոն մը կսպասեն Սենթիֆոգ պապաէն, որ թարգմանի Կաղանդ, in plain english:

Եւ ընդհակառակը՝ Աստուած ողորմի ամէն անոնց՝ որոնք այս օրերուն ձեռքերին գրպանին դրած, յանցաւորի մը պէս գլխիկոր՝ ցուցափեղկներուն առջեւ, մտածելով կը մտածեն ու պիշ պիշ կը նային այն փոքրիկ թուանշաններուն վրայ՝ որոնք կապուած են առարկայներուն մօտը գինեքը նշանակող: Ողորմի Աստուած ընտանիքի հայրերուն, ողորմի Աստուած նշանածներուն, ողորմի Աստուած նոր փեսաներուն, ողորմի Աստու-

ած մէկ քանի պաշտօնեայ ունեցող վաճառականներուն (եթէ մնաց), ողորմի Աստուած ամէն տէրտիս վրայ մէքուես ունեցողներուն, և բարին Աստուած ողորմելով ողորմի և ինձ բազմամեղիս, որ առանց այս դասակարգերէն մէկուն վերաբերելու՝ 25-30 տակի պիտի կաղանդէմ իմ Պատ. բաժանորդներուն և ընթերցողներուն՝ բացառիկ թիւով մը, որուն ինչ ըլլալը հասկնալ ուղղոյնք՝ կրնան կարդալ մեր 259րդ էջը:

Գաղաքար մը տալու համար, կամ աւելի ճիշդը՝ կենդանի օրինակներով բացատրելու համար մեր այս տեսութիւնը, հոս վարը պիտի նկարագրենք շատ մը դասակարգերու մտածումները Կաղանդի մասին:

Երկու ընտանիքի հայրեր ցուցափեղկի մը առջեւ:

— Շատ մի նայիր աչքդ կառնէ Մարգար աղա, բարի լուս ...

— Աչքս առնէ նէ տահա՛ ինչ կուզեմ... քէսէս պիտի առնէ տէ ան կը նայիմ կոր...

— Աման սէնտէ, պիտէր տիւտիւկ ալ կիթսին ... օյնճաա փարա վէրմէկ կիւնահ տըր ...

— Շիմտիքի չօճուգլար էօյլէ տիւտիւկ տէն ֆիլան ալտանմայօրլար, անալարը կիպի հէփ մաքինալը շէյլէր իսթէյօրլար ...

— Օ տա վա՛ր եա՛ ... ախպար, պըզտիկները նէ իսէ խօլայ է, մենձ անաճները նայինք ... տիւն պիզիմքինէ պիր եիւզիւք կէօթիւրտիւք, պուռնունա պիլէ կէօթիւրմէտի ...

— Օ թառափտան զօռում եօգ, պիզ արթըգ ունումուզը էլէտիք, օ պիր վագըթ ըտը քի, պիր ճիւլէեէ պիր եիւզիւք, պիր պաչիյէ պիր քիւքէ վէրիւր իտիք, շիմտի իսէ, իսթէրսէն տուտաղլարընը ախթէր Արթինին եագըսը կիպի եիրմի տէօթ սահաթ եիւզիւ նէ եափըշտըր, քիրա իսթէյէն եօգ, պէնտէ տէ օ իշտահ եօգ, իշտէ օտուն իչին պիզ պու տէրտտէն գուրթուլմուշըգ ...

— Է եօգ, տահա պիզ ծարն ենք ծրա-

բողիկ, իւր բանմէթիւն էօյլէ իտի ամա, չիմտիքի էօյլէ քիւլ եռւտանլարտան տէյիլ, պիւր շէյ վատ իթմէտիքտէն սօնրա պըյըղըմըն ճուժ պասընա բարմազ տօգուլտուրմազ ...

— Օ տէյիլ ամա կաղընտա գա՛չ կիւն գալտը ... կը հարցընէ Մարգար աղան իր բարեկամին, որուն պիւսերը թէեւ ճերմկուտած, սակայն սիրտը երիտասարդ կերեւար, ինչպէս խօսքերէն ալ կրնայ կռահուիլ:

— Չօգ չէ՛յ, օրացոյցա պագմազսըն ...

— Օրացոյցա պագալըմ Դեկտեմբեր օնա գատար պիլիօրըմ, օնտան սօնրա ճէսարէթ էտիպ տէ պագամայօրըմ, չիմտի կէօղէրիմի օրացոյցտան չէքտիմ, սարաֆ ճամէքեանլարընա չէվիրտիմ ...

— Տահա նէլէր Մարգար աղա, սէ՛նտէ մի ...:

* * *

Ընտանեկան շրջանակի մը մէջ:

— Մէյմը պատին վրայի օրացոյցը կը նայի՞ս կոր Յուսեփ աղա, կըսէ կինը, օրերը եկան մօտեցան, դուն իսէ հիչ անտեղուանքը չես ...

— Աս տարի սուգ ենք կընիկ, մեզի չի վայլեր ...

— Տէր ողորմեայ ըսէ, ինչի՞ս սուգն է քի չիյտեմ կոր ...

— Սառաֆ Մէրկէրիոսին ...

— Ատանկ խըսըմ չունինք նէ՞, կը յարէ տիկինը չուարած:

— Երեք տարուան խըսըմիս էր աս մարդը, ֆախաթ ձեզի օրեր, հէրիֆին տունը գրգրեցաւ ...

— Էյ քուկին ի՞նչդ էր քի, իմ թառաֆէս չէ ...

— Քէսէիս մենծ հարը քի, շատ բայէթ կընէի, ինծի չէր սիրէր ամա ես ինչք հոգիւս էվէլ կը սիրէի ... գլխս նեղը գարնէ վր բան կը վազէի, ինծի տէրման կըլլար, ֆախաթ հիմա՞ ...

— Աման դուն ալ Յուսեփ աղա, էլին սառաֆը մեռեր է մեզի՞ ինչ ... դուն ծառքդ թուղթ մը առ տէ ես ըսեմ դուն գրէ, աս տարի գիտես ես քիւթիւնն ալ եկան հասան, անանկ էյիպ օյինճախիով սաւլըմիշ ըլլալիք բաներ չեղան ալթըիս ... գալով ինծի, շիշմանցիւր շիշմանցիւր կըսէիր,

իշտէ մալախներու պէս եղայ, նայինք ինծի ի՞նչ պիտի կաղընտես ...

— Ալթըիս մեզ երկուքս Տէր Արիստակէսը թող կաղընտէ կընիկ, կը նայիմ քի օտթըդ չէ սատկէր տահա ...

— Աս ինչ խօսք է ... իրաւցունէ քանի՞ տարու եմ ...

— Անցած տարի շինել տուած ակուաներուդ թախըմը հանես նէ վաթսունը հինգ, դենանէ հարուրին տասը ըսկօնթօ խօնօղուին պէս ...

— Չաթը դուն ատանկ ես, փարայի սըրան գայ նէ կընիկ մընիկ աչքիդ չերեւար, պաշխա վախիթ ամա՞ ... Ը ... Ը ... Ը ... կատուի պէս մոլաւ մոլաւ, էթռաֆս կը դառնաս ...

— Տուվա ըրէ տիւզ ըռախիին ... ան ալ չըլլայ՞ նէ աչքիս բէրտէ պիտի իշնայ ...

— Ես ան աս չիյտեմ Յուսեփ աղա, կաղընտը կուգայ կոր, աղջիկներուն մէյմէկ ըռգակ, հայտէ ես վաղ անցայ, բան չեմ ուզեր ...

— Կընիկ քեզի խելք մը սովորեցունեմ անանկ ըրէ, հէմ դուն կաղատիս հէմ ես ...

— Ի՞նչ ֆիկուռալը բան պիտի ըսես անապ, ըսէ նայիմ ...

— Դիտե՛ս, խօսք խօրաթայ ըլլայ նէ դուք խուլ մը ունիք, էկէր մէկը աղջիկները հարցունելու ըլլայ նէ տարիքը կը պզտիկացունէք ...

— Է՛յ ... կըսէ տիկինը աչքերը խոշոր խոշոր բացած:

— Իշտէ խապիլը չիկա՞յ քի աս տարուան կաղընտը հիչ հիսապի չառնէք ... աղջիկները տարու մը տահա կը պզտիկանան ...:

—

* * *

Երկու նշանածներու միջեւ:

— Հոգիս, չես գիտեր քանի օր է ինչ մտատանջութեան մէջ եմ, իրաւ թէ ասանկ բան մը չի հարցուիր, սակայն կը փափաքիմ որ ձեր սրտին սիրածը ըլլայ ... կըսէ երիտասարդ նշանածը իր խօսեցեալին, որ նոյն ատեն նշանածին հետ միմեկ գտնուելուն համար կաս կարմիր կտրած պաղ պաղ քըրտինք կը թափեր ... ուրախութենէն:

— Ի՞նչ բան ... չեմ գիտէր որ ...

— Այսինքն ձեզի տալիք կաղանդի նուէրըս կուզեմ որ դուք որոշէք հոգիս ... և ձեր սրտին սիրածը, ձեր ճաշակովը ըլլայ...

— Ա՛... չառ չնորհակալ եմ ... Ի՞նչ հարկ ... մեռսի ...

— Ըսէ՛ք ըսէ՛ք հոգ չէ, բան մը որ պիտի առնուի, դրամ մը որ պիտի տրուի, ինչո՞ւ ձեր փափաքին գոհացում չիտայ ...

— Ի՞նչ ըսեմ ... աւելորդ չէ՞ ...

— Ըսէ՛ք ըսէ՛ք խնդրեմ մի քաշուիք, ինչպէս ըսի ես յօժարակամ, և իբր պարտականութիւն, արդէն որոշ գումար մը յատկացուցած եմ նուէրի մը համար, բայց ճաշակը ձեզի կը թողում ...

— Աստուած իմ ... որչափ դժուար կացութեան մէջ կը գտնուիմ կոր ... խնդրեմ դուք որոշեցէք, ես աւելի գոհ կը մնամ, և թէ անակնկալ մը կըլլայ ինձ համար ...

— Շատ լաւ, քանի որ այդպէս է, ես շարեմ կարգ մը նուէրներ, դուք որոշեցէք, ըսելով կսկսի թուել:

Զոյգ մը գուլպայ, կամ ձեռնոց, բայց չեմ գիտեր ինչ թիւ կը հագնիք:

— Մեռսի, բաւական թիւով ունիմ ատոնցմէ, անկեղծաբար խօսելով ...

— Ուրեմն կաշիէ բռնածոնէ մը, շիք, ճաշակաւոր ...

— Անցեալ տարի հայրս արծաթէ շինուածը նուիրեց ...

— Լա՛ւ, զոյգ մը ֆանէլա բանթո՞ւֆ...

— Ա՛... բնաւ հագած բանս չէ և չեմ սիրեր ...

— Եղունգ կտրելու սիրուն մկրատ մը...

— Եղբայրս Մանչէսթըրէն երկու հատ զրկած է ըլիւն տուփիկի մը մէջ ...

— Հասկցայ, ձեր ուղածը գլխու շիք ասնոր մը պիտի ըլլայ ...

— Շատ տէ՛մօտէ ըլլալուն չեմ ուզեր գործածել ...

— Զոյգ մը մետաքս ժառքքիե՛ն ... բայց ներեցէք օրիորդ այսպիսի նուէր մը առաջարկելուս համար ...

— Եւ փոխադարձաբար պիտի ներէք անշուշտ երբ համարձակիմ ըսել թէ՛ ֆօսսէ տուա կը գործածեմ, որուն ծայրերը արդէն կը գտնուին ատկէ ...

— Տակէն ֆանէլա կը հագնի՞ք հոգիս,

կը հարցնէ նշանածը քրտինքները սրբելով և նստած տեղէն խախտելով:

— Ա՛... ֆլանէ՛լ ... երբեք ...

— Ուրեմն ... հա անցեալ օր ընկոյզ կար ձեռքերնիդ և տեսայ թէ ահաւոր կը կոտրէիք, ձեզի նիքէլէ ընկոյզ կոտրելիք մը...

Օրիորդը տեսնելով որ տղան տունի ետեայ կը թուէր փոխանակ շիք կաղանդէք մը յիշելու՝ խօսք կ'առնէ,

— Կը տեսնէք սիրելիս, ըսածներնուդ դիտմամբ առարկութիւններ կընեմ կոր, որպէս զի դուք որոշէք ձեր ճաշակովը բան մը, որ ինձ ալ սիրբոյիդ մը կըլլայ ...

— Պռավօ հոգիս, անանկ թող ըլլայ, կըսէ, և հետեւեալ օրը իր ազգականներէն մէկուն տունը ճաշի հիւր ըլլալով, վարպետ ձեւով մը աշրթը ֆիցկ կընէ այդ տան օրիորդին բօքս-սեռվիքը, որուն վրայի ինքսիայը կը յարմարէր նշանածին ...:

—

* * *

Վաճառատան մը պաշտօնեայնեան միջև:

— Ծօ՛, ատ խուռնագութիւնդ ո՞վ կը կըլլէ ... կաղընար կուգայ կո՞ր եայ, օղապ պէկիրիի պէս գլոխդ կախէ հապըռէ աշխատէ, կըսէ գրագիրներէն մին իր ընկերոջը:

— Կեցիր նայինք աս տարի ալ չեւելցունէ նէ բլաքօնը պիտի բանամ ...

— Անցած օր բաթոններս ձէպէն թուղթ մը ձգեր էր, ամա չելլաս բերնէդ փախցունես, բացի կարդացի ...

— Ծօ՛ ի՞նչ կըսես ... մէջը ի՞նչ կար...

— Սրայով անուններ, մէջը քուկինդ, իմինս հէ՛մ ալ դիմացը ասնկ գրուած էր 500-600, 450-525, 300-370 ... ֆալան ...

— Ծօ՛ սէքսէ՛մ, իշտէ էվէլցունէ պիտի անանկէնէ, աչկս նայէ ծօ՛, աս կաղընտին օխտը ըռախին ինէ է ...

— Սուս, կուգայ կոր կըսէ այն պաշտօնեան՝ որ նստած գիր կը գրէր, մինչ բաթոնը իրօք ներս կը մտնայ վաճառատունէն, անձրեւէն թըջած մուկ կտրած, և թհա երկու գրագիրները վրան կը վազեն, ինչպէս նաեւ մաղազային համալը և ուրիշ պաշտօնեայ մը, ու կսկսին բզկտելով բալթօն, լաստիկները հանել ...

— Կեցէք ճանըմ ի՞նչ կըլլաք կոր ...

— Պարտկերնիս է էֆէնտի ...

— Ծօ՛ թեւս, ծօ՛ պաճախըս ...

— Հանգիստ ըրէք էֆէնտի, մեր պաճախըք ինչ է, հէլպէթ պիտի ընենք ...

— Ծօ՛ կամաց ծօ՛, բալթօին թեւը քակեցիք ... ծօ՛ աստար վախտ է խելքերնիդ ո՛ւր էր քի, հիմա ասանկ իշկիւզարութիւն կը ցուցնէք կոր ...

— Պարտկերնիս էֆէնտի, ձեզի չընենք որո՛ւ պիտի ընենք, ձեր հացը կուտենք կոր, վիզերնուս պարտքն է որ սիրով պէտք է ընենք ...

Վերջապէս հազար դժուարութիւններով մարդը ինքզինքը կը գտնայ, իր պիւռօն քիչ մը յոգնութիւն առնելէ վերջ, մինչ բոլոր պաշտօնականները ամսականին աւելնալը հաստատ գիտնալուն, ոգի ի բռին կաշխատին հոս հոն, բաթօնը կը ձայնէ՝

— Տղա՛ք, հիշ գետնէն թուղթ մը գըտա՛ք աս օրերս ...

—

Բոլորը մէկ իրարու երես կը նային կը կարմրին կը ձերմկին և սրտերնին ժամացոյցի պէս կսկսի զարնել։

— Զեզի եմ, կը լսէ՞ք կոր, գետնէն սանկ ըռախամըլ թուղթ մը գտա՛ք, բէք պէտքի էր տէ անոր համար կը հարցունեմ կոր ...

Գանող գրագիրը չի կրնալով դիմանալ, և արդէն քաջ գիտնալով թէ՛ նոյն իսկ այդ թուղթը իր և ընկերներուն ամսականին յաւելումը կը պարունակէր, չիտակ կը տանի յանձնել տիրոջը որ առնելուն պէս կըսէ,

— Հա՛, իշտէ աս թուղթը կը փնտռէի կոր, ինծի նայեցէ՛ք, աս թուղթին վրայ ձեր անունները գրած եմ ...

Բոլոր պաշտօնականները ահանջ կը կտրին և ոտից ցլուխ կը ցնցուին։

— Ամէն մէկերնուդ անուան դիմացը ըռախամներ կան, իշտէ ատ նիւմէռօններէն պաշլայելով՝ կիրակի պիտի խանութ գաք, մէկիկ մէկիկ խումաշներուն թօփերը վար առնէք չափէք պիտի, չիւնքիւ պիւանջօ պիտի հանենք եկածը տարեգլուխ է ...

—

* * *

Նոր ամուսնացածներու միջեւ, մեղրալուսնէն վերջ։

— Սմբա՛դ ...

— Է՛ ...

— Ծանրմ աս կանուխ կանուխ պառկե՛լը ինչ է, չօգ չէ՛յ ... նստէ տէ երկու չիֆթ լախըռալը ընենք ...

— Լէշ եմ կտրեր լէ՛շ, մաղազան մինչեւ իրինկուն չէնեէ կը նետենք կոր, ձգէ տէ քիչ մը գիշերէ գիշեր ըռահաթ ընեմ ...

— Ինծի նայէ, կաղընտը կուգայ կոր խապար ես, նայիմ ինչ պիտի հէտիյէ ընես...

— Էյ ի՞նչ ընեմ, վարժապետ չեմ քի աշակերտներուս ծառքը նայիմ, բարով եկաւ հազար բարի ...

— Բա ա՛ս ինչ է, հէտիյէն աս տարի ըռա՛ֆը գրինք, եաղմա չիկայ հէտիյէսիզ չեմ ըլլար ըսեմ քեզի, առաջ նէ իսէ մուհապէթ մը ունէիր կըռը կըռը կը պերէիր, հիմա ատ ալ վերցաւ, հիշ տէյիլ իսէ ըռզակ մը բան մը բեր կաղընտին տէ, վաղ անցանք...

— Քեզի բան մը ըսեմ Ուսկուկ, կաղընտին հէտիյէ տալ առնելը չօճօխճա բան է, դուն իս ես առէր ես ալ քեզի, ի՞նչ տէյի հիմա ելլամ պօշ տեղը փարա խարճեմ, դուն օր մը առաջ արծաթ պօռդը ինծի կուտաս, ես չարչին օսկի ճուր մը քսել կուտամ կը բերեմ, իշտէ պու ..., հայտէ մօմը մարէ տէ պառկինք ...

— Մոմը մարեմ ամա սիրտիս մօմը չի մարիր ... մէկ հէտիյէն պիլէ ներսիդիէդ չիգար կոր քի հանես տէ տաս ..., հալխէն պիտի ամչնամ ...

— Անանկ է նէ քեզի պաշխա եօլ մը ըսեմ ան կընենք, հէմ ալ հալխէն չես ամընար, ես չարչիէն ան գիշերը ցուցունեմ ըսելով ըռզակ մը կառնեմ կը բերեմ, դիր պտըտէ, էրթէսի առտուն չիտակ տեղը կը տանինք թէսլիմ կընենք ...

— Պերէքեաթ վէրսին Տէր Սէօրէբէին պերանը սէպէպլի է, չէնէ հիմա կը հասկնամ կոր քի վախիթ ասնելէն ետքը, ամէն բան մէկդի, դուն ինծի ալ ատ էրեթթի ըռզակին պէս դնես մօրս թէսլիմ պիտի ընես եղէր...

— Զէվզէ՛կ ... մինչեւ հիմա պիր տիւզ ես քեզի հէտիյէ կընէի, հիմա Աստուած կա-

մենայն նէ դուռն ինծի պիտի կաղընասես, գիտ-
նալըս քէռամանին իննին մէջն ես ըսաւ . . .

—

* * *

Ու դեռ ի՞նչ թապօններ, ի՞նչ խօսակցու-
թիւններ, կռիւներ կըլլան ու կանցնին այս
օրերուն, ի խնդիր նուէրի, որոնց արդիւնքը
կըլլայ քսակներու բարձում, սեղանաւորի
բազմապատկութիւն:

Ըստ իս, է՛ն աղուոր և յարգելի նուէրը
պէտք է Աստուծոյ սպասել, որ մինչ ամէն
մէկերնուս տարիքին վրայ կուգայ թիւ մը
նուիրել, և որուն համար պէտք է ըսենք
իրարու:

Շնորհաւոր նոր տարի և բարի կաղանդ:

ԼԻԼԱ

ԿԱՂԱՆԴՁԷՔ ՄԻ՛ ԳՆԷՔ

Առանց տեսնելու՝

ՀԱՅԵՐԷՆ ԵՐԿՐԱԳՈՒՆՏԸ




Վաւերացուած կայս. Հանրային
կրթութեան նախարարութենէն և պատ-
րաստուած կարող աշխարհագէտներու
կողմէ: Դպրոցներու, Սալօններու,
Առեւտրական գրասենեակներու ան-
հրաժեշտ պէտքն ու լաւագոյն զար-
դըն է այս glauben:

Տպագրութիւնը լաւ, չինուածքը
տոկուն, բովանդակութիւնը ճշիւ, գի-
նը աժան:

Շրջանակով 85, առանց շրջանակի
65 դրշ. գաւառներու համար 15 դրշ.
փոխադրութեան ծախք: Դիմել միակ
կեդրոնատեղին:

Կ. Պօլիս, Պապը Ալի ճատտէսի թիւ
56 Յովհ. Աղնաւոր էֆ. ի «Օսմանլը»
գրատունը:



ՆՈՐԷՆ

ԶԻՖԹԷ-ՍԱՐԱՖԻ

ՄԻԱՄԻՏԻ ՄԸ ԱՐԿԱԾՆԵՐՈՒՆ

ԲՈՂՈՐՏԻՔԸ

Բ. ՅՕԴՈՒԱԾ

(Զոր անցեալ շաբաթուան Ա. յօդուածին պատ-
ճառած յօդացաւը կրնայ բժեկել. . .)

Ամբակում ու ես մեղաւորս, որ մեղա-
ւորներու մեղաւորագոյնն եմ . . . տաներէց
Քահանայիս խոստովանութեամբը, դէմ դի-
մաց նստեր էինք՝ մէջտեղնիս ունենալով
Զիֆթէ-Սարաֆի մեծանպատիւ գիրքը:

Մեր Բամպուխը, Ամբակումի սիրական
կատուն, եկաւ գիրքին վրան նստեցաւ, ան-
հանդիստ ըլլալով վրայէն վար իջաւ, քիչ
մը ետքը նորէն վրան հեծաւ, հոտւըտաց
հոտւըտաց, պիսիքը տնկեց ու նորէն չորս
կողմը հոտւըտաց ու արագ մը փախաւ մըռ-
լաւ մուլաւ մըմռալով . . . Մըմրեանի քեր-
թուածներէն մի՛ն. ո՛ր գաղտնիք խորհրդա-
ւոր, ո՛ր խորհրդաւոր գաղտնիք:

— Ի՞նչ եղաւ կատուն, մե՛ր բամպուխը:

— Համմէ՛ պատասխանեց Ամբակում:

— Ի՞նչ եղաւ մեր կատուն,

Զեռքը ճակտին զարկաւ Ամբակում:

Եւ խոշոր բժշկական հատոր մը վար ա-
ռաւ գրադարանէն: Լի-Քա-թու-Զինք-Զու-
Ֆու-Պա-Պա-Ֆինկօ նշանաւոր Զինացի բը-
ժշկին ձեռագիր հեղինակութիւնն էր և
յիշեալ բժիշկը այդ անտիպ գործը Ամբա-
կումի ձգած էր ի յիշատակ բարեկամութեան՝
սր տեղի ունեցած է ի. . . Զինաստան յամի
1192:

Այս վիթխարի՝ գիրքը որ էշու կաշիով
կողք մը ունի, բացաւ Ամբակում և ակնո-
ցը աչքերուն դնելով սկսաւ կարդալ անոր:

մէկ էջը և բարձրաձայն: Գոցեց գիրքը եւ սենեակին մէջտեղը գալով ձեռքերը բարձրացնելով ըսաւ,

— Ո՛հ, դողացէք յօգակապերս, քանի որ ալ գաղտնիքը երեւան ելած է իմ ամենասիրելի երբեմնի բարեկամիս Լի-Քա-Թու-Չին-ք-Չու-Ֆու-Պա-Պա-Ֆինկո նշանաւոր բը-ժըշկին, որուն հետ Չինաստանի մէջ... Թէյ խմած ու բրինձ կերած եմ. ահա այդ բը-ժիշկը կըսէ թէ՝ «Անբարոյ գիրք մը կրնայ նոյն իսկ ընտանի կենդանիներն ալ... գլխէ հանել՝ անոնց բնազդները արթնցնելով» և եթէ Չինացի բարեկամիս՝ որուն անունը չեմ ըսեր քեզի երրորդ անգամ չինդացնելու համար, այո, եթէ չես հաւատար անոր ըսած ճշմարտութեանը, վար նայէ պատուհանէն և տես Չի-Ֆի-Սարաֆի գրքին Բամպու-խին վրայ ըրած «Այնձպահը» ական ազդեցութիւնը: (Ա՛հ «Այն պահը», որ մեր բանաստեղծներէն մէկ քանիին քերթուածներ... քերթել կուտան՝ Բանաստեղծութեան... խաղան իսպիւհէն:

Ու ձեռքերը սեղմելով աւելցուց.

— Երեւակայէ՛ երեւակայէ՛ սիրելի բարեկամ՝ նոյն իսկ կատուները, կատուները: Ու նորէն նստեցանք:

Ամբակում իր սիրած ցառկիլիկն սկսաւ քաշել:

— Պատահաբար բա՛ց էջ մը Միամիտի մը արկածներէն և կարդայ նայինք կատուններն իսկ գլխէ հանող այդ գրութիւնները ինչպէս բաներ են.

Նախ աչքերս խտրողեցան երբ գրքին էջերուն վրայ նայեցայ:

— Ինչու չես կրնար կոր կարդալ ըսաւ:

— Գիրքը մանր են Ամբակում,

— Քանի՞ բունքո,

— Ութը,

— Ութը՛, ութը՛, ըսել է աչքերու ալ վնաս, բարոյականէն ետքը ֆիզիքականի վնաս. ծօ՛ մէյմէկ ակնոց՝ ես՝ մէյմէկ բէրսած սրգ բաժնէր թող գիրքին հետ...: Նա սա ակնոցս առ տէ կարդայ:

էջ մը բացի պատահմամբ և կարդացի:

«Մաթէմաթիքի մէջ երկու կէսեր ամբողջ մը կը ձեւացնեն, և ամուսնական աշխարհի մը մէջ երկու ցուրտեր մէկ տաք».

— Դարձուր, հիմա հայտնութիւնը կը կոխեմ հա՛:

Նտեւի երեսը դարձուցի և նորէն կարդացի.

«Եւ կնկան մը հետ աչուընիս կը փակենք երկու կէսերով ամբողջ մը կազմելու համար»

— Գոցէ՛, գոցէ՛ գիրքը, որպէսզի խաֆայիթ սա նարկիլէն չփակցնեմ և ըսէ Չի-Ֆի-Սարաֆի որ ի՛նչ նպատակ կայ այս գիրքը հրատարակելուն մէջ, բայց կը խնդրեմ որ քսակը չի ցուցունէ՛ ասոր ի պատասխան: Ու կըսես իրեն նաեւ թէ՛ իր ըրած գրականութիւնը՝ ինչպէս որ ասկից առաջ սահմանաբակ ընթերցողներէ կարդացուած էր, պէտք էր որ նորէն անանկ ըլլար, ինչու որ այդ գրականութիւնը շատերու սամոքսին խանգարում կը պատճառէ: Ահա օրինակ մը իր բաց գրականութիւնը ժողովուրդին քը-չելուն առթիւ. մերինները դեռ անդրաժարատիք չունին, ելեր ինք մէյմէկ չիք բանդալուն կը յանձնարարէ:

— Վերջացնենք Ամբակում:

— Բայց դեռ ըսելիք ունիմ:

— Վերջացնենք Ամբակում:

— Իրաւունք ունիս, ստորագրէ ու դուրս ելլանք Հանրագիտակի այս թիւէն որպէս զի տեղ տանք կաղանդի առթիւ հըրատարակուելիք Հանրագիտակ-Ալպուիմ:

ԱՆՄԵՌՈՒՆԿ

5^{րդ} ԳԵՂԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ ՅՈՒՑԱՀԱՆԴԵՍ

«ՍԻՆԿԷՐ» Ի

Բերա Մեծ փողոց, Թ. 343, Առաջին յարկ

ԱՄԷՆ ՕՐ ԲԱՅ Է

ՄՈՒՏՔԸ ՉՐԻ

Առաջին կարգի մրցանակի արժանացած Բարիզի 1900ի, Սեմ-Լուիի 1904ի, Միլանի 1906ի եւ Պրուսայի 1907ի ցուցահանդեսներէն

ՇԱԲԹՈՒԱՆ ԼՈՒՐԵՐ



ԳՈՒՄ-ԳԱՐՈՒ. — Նոյ Նահապետի տա-
պանին մէջ տպուած, Եւրոպական միւզի-
վոֆալ գիրքին մէջ հանդիպեցանք առջի Կի-
րակի օր երգուած եռաձայնէն մէկ քանի կը-
տորներ, զորս կը կարծուի թէ գիրքին հե-
ղինակը տեղւոյս երաժշտագետէն ընդօրինա-
կած ըլլայ : (Չըլլալիք բան չէ. Մ. Խ.) :

ՄԱԳՐԻ-ԳԻՒՂ. — Համբելով չի հասնե-
լիք մեր եռաձայնի խուճը տեսնելով որ մէկ
մահարո(.) ով կարելի չըլլար կոր սպասուած
արդիւնքը ձեռք ձգել երաժշտական կանո-
նաւորութեան մասին, որոշեցին մէկը երեքի
բարձրացնել : (Excelsior ! Մ. Խ.) :

ԿԱՐԵՒՈՐ ԹԱՂ ՄԸ. — Ս : Աստուա-
ծածին եկեղեցւոյ թուակաւոր պաշտօնեայ-
ներէն մին, հարսանեկան հանդէսի մը առ-
թիւ բանկալի մոմագինի գանձանակին 20
դրշ. նուիրեց : (Վա՛յ ... անթոշակ պաշ-
տօնեայ ալ կայ եղեր... չօգ չէ՛յ... Մ. Խ.) :

ՍԿԻՒՏԱՐ. — Տեղւոյս Աղքատախնամը,
ի ձայն փողոյ, սրինգիտաւիղի և չիթքե նա-
ղառալի անցեալ շարթու ածուխ բաշխեց
ընդհանուր ալքատաց :

ՆՈՅՆ. — Ելեքտրական լոյսը վայելելու
համար վերջին չոգենաւին մնացող ընտանի-
քի մամածակ հայր մը անցեալ իրինկուն ուշ
ատեն երբ տուն հասաւ, տեսաւ թէ կինը
թուղթ մը ձգելով մեկնած էր, «Էս ալ Պէյ-
օղլուի Լիւսւ լամպաները սէյրի համար աս
գիշեր հոն մնացի ...» : (Բիմվէրալին որի՞
մնաց արդեօք ... Մ. Խ.) :

ԵՖՆԻ-ԳԱՐՈՒ. — Թօփ-գափուցի ոսկե-
րիչէն կը խնդրուի որ փոխանակ իր օձիկները
անոր ասոր տունը տանել և անկուսիօրէն
իւրիւ ընել տալու և մերժուելուն՝ թող
պատմա չապիկ մը հագնի : (Եւ կամ արշընը
էլի փարանոց գեֆիւ. Մ. Մ.) :

ԳԱՏԸ-ԳԻՒՂ. — Զորեքշարթի գիշեր հոս
ձմեռնային թատրոնը տեղի ունեցած Ֆէհիմ
էֆէնտիի ներկայացումին, մանկամարդ կին
մը այն աստիճան խնդացեր է շարունակ որ,
դէմքին ջիղերը քաշուէր, և ամուսնոյն մին-
չեւ լոյս չփելովը միայն կարելի է եղեր ա-
ռաջքն առնել մեծ վտանգի մը :

ՓՈՐԱԳՐԻԶ

ՏԻՐԱՆ ՇԻՐԻՆԵԱՆ

Կ. Պոլիս Պապր-Ալի հասէսի ձիղալ
օղլու եօգուեր թիւ 10.

Յիշեալ Փորագրատունը Եւրոպայէն բերել
տուած է մասնաւոր փաթալօկներ, որոնք կը
պարունակեն գրքի կողքերու համար առ-
նուլօ ծաղկենկար շրջանակներու և տպագ-
րական զանազան տեսակ առնուլօ տառերու
օրինակներ : ԽԻՍՏ խնամով կը պատրաստէ
ամէն տեսակ մէտաղի և փառչուլի վրայ
վաճառականական կնիքներ, տօսախի (չիմ-
չիթ) և կալվանօրլասթիլի վրայ ամէն տեսակ
նուրբ եւ նաւակաւոր պատկերներ, և բժիշկ-
ներու, փաստաբաններու, վաճառականներու,
ատամնաբոյժերու և դայեակներու համար
դուռերու վրայ գետեղելիք քապիլաներ :

ԱՍՈՆՅՄԷ ԶԱՏ՝ կստանձնէ նաեւ տը-
պագրական ամէն տեսակ գործեր, ինչպէս՝
նամակի անքիքներ, հասցեներ, ձեռքէ ցըր-
ուելիք ազգեր, եղիքներ, քարթ-աորէս-
ներ, և վերջին նորաձեւութեան յարմար
այցաքարդեր, նշանախօսութեան և հարսան-
եաց հրաւիրագրեր՝ որոնց օրինակներէն ճոխ
մթերք մը կը գտնուի փորագրատան մէջ :

Գաւառներէ եկած ապապրանքներ խիստ
խնամով կը պատրաստուին և կարելի եղա-
ծին չափ փութով իրենց հասցէին կը ղրկուին
և որոնց փոխարժէքը կանխիկ ղրկել անհը-
րաժեշտ է :

ԽԻՍՏ ԳՈՂԱՑՈՒՑԻԶ ՊԱՅՄԱՆՆԵՐ



Արսօնսէր ԱՐՄԷՆ ԼՈՒՍԻՆԵԱՆ

ՏՊԱԳՐ. Ե. ԱՍԱՏՈՒՐԵԱՆ

Պապր-Ալի հասէսի թիւ 52.

ԱՐՍԷՆ ԼԻԻԲԷՆԻ ՏԱՐՕՐԻՆԱԿ ԿԵԱՆՔԸ

ԽԱՐՏԵԱՇ ԿԻՆԸ

Ծածկուած պատշգամին վանդակները ծածկող պաստառին ետեւ, ծունկի եկած ըսկըսաւ դիտել:

Մարդ մը կը խառնէր դարանը լեցուած թուղթերը: Եւ այս մարդը, իրեն անանկ երեւցաւ — բայց այս նախազգացում մըն էր — այո՛, ինք անանկ տեսաւ որ Արսէն Լիւբէնն էր:

Նոյն դիմաստուէրը, այն որոշ շարժումները, բայց ի՞նչ կը փնտռէր...

Ասիկա, շուրջ տասը վայրկեան տեսեց, և ահա յանկարծ դուռը բացուեցաւ և Օր. Բըլօթիլտ Տէսթանթ ոստումով մը ներս մտաւ ետին հետեւող մէկու մը ըսելով.

— Ըսել է չէ՞ս մեկնիր հայր:

Մարդը որ դարակին թուղթերը կը խառնէր, հրեց դարակին դուռը և գնաց պահուածեցաւ պատուհանին մէջը ու վարագոյրները վրան քաշեց:

Օր. Բըլօթիլտ ի՞նչպէս զայն չտեսաւ, ինչպէս չիմացաւ ըրած աղմուկը:

Օրիորդը հանդարտօրէն ելեքտրական կուճակը դարցուց և տեղ տուաւ որ հայրը նըստի, ու ինք ալ դիմացը նստեցաւ: Նէ գիրք մը առաւ որ հետը բերած էր և սկսաւ չարդալ:

Պահ մը ետքը Պ. Տէսթանթ գլուխը աջ ուձախ կը տատանեցնէր. կը քնանար:

Վարագոյրները իրարմէ զատուեցան: Մարդը — Արսէն Լիւբէն և Շօլմա աղէկ ճանչցած էր — պատուհանին առջեւէն վար սահեցաւ, և դէպի դուռը նըթալու շարժում մը ըրաւ Պ. Տէսթանթի ետեւէն անցնելու, բայց ճիշդ Բըլօթիլտի քովէն էր որ անցաւ, օրիորդը չեւերաց: Սակայն ընդունելի է որ օրիորդը բան մը նշմարած չըլլայ:

Լիւբէն դէպի դուռը դացած առնել, սեղանէ մը առարկայ մը գետին ինկաւ՝ իրմէ քսուած և Պ. Տէսթանթ ընդոստ արթնցաւ:

Արսէն Լիւբէն արդէն անոր առաջքն էր գըլխարկը ձեռքը և ժպտուն:

— Մաքսիմ Պէրմօն, աղաղակեց Պ. Տէսթանթ ուրախութեամբ, ո՞ր հովը փչեց:

— Ձեզի և Օր. Տէսթանթը տեսնելու փափաքը:

— Ուրեմն ճամբորդութենէ՞ մը եկար:

— Այո՛ և երէկ:

— Եւ մեզի հետ ճաշելու պիտի կենա՞ս:

— Ոչ ճաշարանը պիտի ճաշեմ բարեկամներովս:

— Ըսել է վաղը պիտի գաս, Բըլօթիլտ, թախանձէ որ վաղը գայ, ա՛հ սա բարի Մաքսիմը... իրապէս ձեր վրայ կը մտածէի այսօր:

— Իրա՞ն:

— Այո՛, երբեմնի թղթերս կը տեղաւորէի և մեր վերջին հաշիւը գտայ:

— Ո՞ր հաշիւը:

— Հանրի-Մարթէն ծառուղիինը:

Պատշգամին կիցը պղտիկ սրահ մը կար, ուր ամէնքը մէկանց նստեցան: Շօլմա այն առնել կրցաւ դիտել Լիւբէնը: Բայց իրապէս Լիւբէնն էր: Այո՛, ապահովար, բայց ուրիշ մարդ էր և որ քանի մը կէտերէ Արսէն Լիւբէնին կը նմանէր և որ սակայն որոշակի անհատականութիւնը կը պահէր, իր նայուածքը, իր մաղերուն գոյնը:

Ան գուարթութեամբ կը խօսէր, պատմութիւններ պատմելով և որոնք Պ. Տէսթանթը կը ճաթեցնէին խնդալէ ու Բըլօթիլտի չըթուընդերուն ժպիտ մը կը բերէին: Ու Լիւբէն քսնի կը դիտէր որ անոնց տիրած էր, կուրախանար ու սրամտութիւնը և զուարթութիւնը ալ աւելի կը կրկնապատկէր: Այս երջանիկ ձայնին հնչումէն անզգապապէս, Բըլօթիլտի դէմքը կողեւորէր և կը կորսնցնէր պաղարիւնութիւնը:

(Շարունակելի)

ՄԵԾ Վ ԱՃԱՌԱՏՈՒՆ

ԼԱՆՈՅՐԱԶՆՈՅՆԱՅ

Արանց, Կանանց եւ Տղայոց
ՊԱՏՐԱՍՏ ԵՒ ՉԱՓՈՒ ՎՐԱՅ

Գ. ԷՐՄԷՆԵԱՆ եւ Ընկ.

Կ. Պոլիս, Սուրբան Համալ, Թոփալեան խան
Սոյն վաճառատունը, որ տարիներէ
ի վեր իր ուղղութեամբ, ապրանաց
տոկոսութեամբ եւ գիներու անմրցելի
աժանութեամբը շահած է բոլոր իրեն
գիմող յաճախորդաց վստահութիւնը,
այս անգամ ձմեռուան յատուկ ընտիր
հագուստներու, կանանց բեղուններու
եւ տղայոց շիք եւ գիմացկուն ֆաբրիկ-
ներու ճոխ մթերք մը պատրաստ ունի,
որ ջերմապէս կը յանձնարարուի ամէն
անոնց, որոնք պէտք ունին ներկայ
եղանակին հագուստի եւ ուրիշ նմանո-
րինակ պիտոյից:

Սակարկութիւն չկայ, թիւը 2 զրչ. է:
Գաւառներէն յանձնարարութիւնք
փութով կը կատարուին: 50—16



ԱՌԻԹԷՆ

[ՕԳՏՈՒԵՑԷՔ

ՊՓՈՒԹԱՅԷՔ ԳՆԵԼ

Կ. ԵԱՎՐՈՒԵԱՆ

Յ. ԻՍԱԳՈՒԼԵԱՆԻ

Ճեռայ պէյ խանին
սակ

Թէյի մեծ վաճառատան թէյերը,
որք ուղղակի ներածուելով Սեյլանէ,
Չինաստանէ, Հնդկաստանէ, Ճապոնէ եւ Ճա-
բոնէ:

Ամենէն դժուարահաճներն իսկ կըր-
նան գոհանալ թէյերու թարմութեամբ
հոտովն ու համովը:

Փնտռեցէք մանաւանդ իրենց յա-
տուկ խառնուրդները, որք կը ծախ-
ուին մեծ եւ փոքր քանակութեամբ:

Ուշադրութիւն մարտային:

ՀԱՆՐԱԳԻՏԱԿ

ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ԾԱԲԱԹԱԹԵՐԹ

16 ՄԵԾԱԴԻՐ ԷԶԵՐՈՎ ԵՒ ՃՈՒ ՊԱՏԿԵՐՆԵՐՈՎ ՀԱՄԵՄՈՒԱԾ

Կ. Պոլսոյ համար սարեկան բաժնեգին	50 դր.	Վեցամսեայ	25 դր.
Գաւառաց համար	»	»	27 »
Արսասանման	»	12 ֆր.	» 6 ֆր.

Կ Ա Ն Ի Ի Կ

ՀԱՍՑԷ՝

ՎԱՀԱՆ ՓԱՓԱԶՆԱՆ, Պապը-Ալի Գաւառեանի սպարան քիւ 52.

Գաւառներու մէջ գործակալներ կը փնտռուի, պայմանաւ որ երաշխաւոր մը ցոյց տան
թէ միշտ նոր բաժանորդներու անունին եւ հասցէին կսեն նաեւ բաժնեգինները:

Դրամները պէտք է ղրկուին կամ Օսմ. Մանտաբոսթով եւ կամ բօհն ասցթայի փութով 20
20 ղրուշի հաշուով:

ԳԱՌՆԻԿ ՔԵՇԻՇԵԱՆ

ՆՈՐ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ

Կ. Պոլիս Հանո-Բուլօ խան քիւ 2

Նախ փորձառուները, յետոյ խաբուողները միայն գիտեն թէ ո՛րչափ դժուար է, գտնել ու գնել ապրանքներ՝ որոնք թէ տոկուն ըլլան, թէ ճաշակաւոր և թէ . . . աժան :

Դառնիկ Քէշիշեան վաճառատունը, թօհաֆիէի էն առաջնակարգ եւրոպական գործարաններէն բերել տուած է տեսակ տեսակ կանանց և արանց յատուկ Ֆանելաներ, գուլպաներ, քաւիկնակներ, ձեռնոցներ, փողկապներ, բրդեղեններ, Ֆիլսիֆօս և խիստ ճաշակաւոր ներգնաւապիկներ, գլխու շարքեր, քաւ ֆոսէներ ևլն. ևլն.

Զերմապէս կը յանձրարենք անգամ մը այցելել այդ վաճառատունը, ուրկէ անպատճառ գոհ մնացողներ միշտ հոն դիմելով պիտի հաստատեն թէ՛ զինքնու աժանութեան, իստակի անուրիւքեան և սպրանաց տկունութեան երեք առաւելութիւնները ուրիշ ո՛ր և է տեղ կարելի չէ գտնել :